

## ԳԼՈՒԽ ԻԸ

Սուրեն Գերմանիկ հասաւ առանց դիմադրութեան մտաւ Փոքր Ասիա, եւ երկրին վիճակին վրայ Յայելով կատարեալ անիշխանութիւն մը տեսաւ, որ կը տիրէր: Իբրեւ թէ Յունաց կայսրութեան մէկ գաւառն էր, բայց իրօք ոչ յունաց, ոչ արաբաց կը վերաբերէր, ուստի նստաւ Արապիսուս եւ սկսաւ իր գունդը մեծցնել, կանոնաւոր զօրաժողով շինելով ի հայոց: Խիստ ընտրութեամբ՝ շատերուն միայն երեսը եւ աչքին մէջ նայելով անդարձ կը մերժէր. կորովի, առողջ երիտասարդք էին ընդունեալ, շարունակ օրը հինգ-վեց ժամ կրթութիւն սովորական բան էր իրենց համար. ամենափոքր զանցառութիւն հրամայալ օրինաց կամ անիրաւութիւն խստիւ կը պատժուէր, մաքուր եւ սննդարար էր իրենց ուտելիքը, իրենց զգեստներն ու զէնքերն ընտիր: Իրենց ռոճիկն աւելի էր յունաց եւ արաբաց տրուած ռոճիկէն, աւարին կէսն իրենց պիտի բաժնուէր արդարութեամբ, կէսը զօրավարին: Պատերազմէ փախչողի պատիժը մահ էր:

Արապիսուսի յոյն իշխանը վախեն լաւ ընդունելութիւն ըրաւ Սուրենի եւ գաղտնի իմացուց Կեսարիս կուսակալին այսպիսի կ'ասկածելի հիւրի մը ներկայութիւնը, որ առանց վնաս տալու արդէն զօրաւոր գունդ մը՝ աւելի եւս կը զօրացնէր, թէւ ամենեւին բռնութիւն մը չէր տեսնուած ոչ իր, ոչ իր զօրաց կողմանէ: Կ'իմացնէր նաեւ, որ իւր հիւրը միտք ունէր քանի մը օրէն Մալաթիոյ ճամփէն երթալ Յայաստան:

Կեսարիս կուսակալ Վասակ անուն հայ իշխան մ'էր, եւ այնպիսի վտանգաւոր դիրքի մը մէջ կը գտնուէր նոյն միջոցին, որ այս լուրը լսելուն՝ շուտ մը բարելաւման հրաւեր գրեց Սուրենի, որ իւր գունդն առնու եւ գա Կեսարիա, երդմամբ ապահովցնելով զինք ամէն կերպով գոհ ընելու: Սուրեն ընդունեցաւ հրաւերը եւ երբ հասաւ Կեսարիա, զարմացաւ, որ Վասակ անձամբ հեծելոց փոքր զնդով կ'ուզար զինք դիմաւորելու. եւ երբ մօտեցաւ, իջաւ ձիէն եւ պագտուելով իբր հին բարեկամ.

— Եղբայր,— կ'ըսէր,— ինչչափ ժամանակ է, որ քեզի կը սպասեմ. Թեոդորոս Ռշտունի քանի՛ նամակաւ է, որ զքեզ կը յիշէ, Կամսարական եղբարքդ զքեզ կը հրցնեն, քեռորդի մը ունիս եղեր Մամիկոնեան, նա ողջ-առողջ հասեր է հայրենիք, զքեզ մեռած՝ կը համարին, եւ. ես ուրախ եմ, որ ոչ միայն ողջ-առողջ զքեզ կը տեսնեմ, այլեւ լաւ գնդի մը զօրագլուխ: Շատ լաւ ըրիր, որ իմ հրաւերս ընդունեցար եւ Յայաստան չգնացիր: Երթանք, ցցնեմ քեզ նամակներ: